ՊՈՂՈՍ ՆՈՒԲԱՐ ՓԱՇԱՆ
ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ

ՄԻՔԱՅԵԼ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Պողոս Նուբար փաշան XX դարասկզբի հայ ազգային ականավոր գործիչներից է: Ապրելով հայրենիքից հեռու՝ նա իր գիտակցական ողջ կյանքը նվիրաբերեց հայրենի ժողովրդի բարօրությանը: Դարասկզբի ազգային, հասարակական ու քաղաքական գործիչների անզուգական փաղանգում Պողոս Նուբարն ունեցավ իր ուրույն տեղն ու դերը, ժամանակակիցների շրջանում վաստակեց անվիճելի հեղինակություն, սերունդների հիշողության մեջ մնաց որպես մեծ բարերար ու անսահման հայրենասեր: Եվրոպական դիվանագիտական, հասարակական ու քաղաքական շրջանների հետ ունեցած անձնական կապերն ու ծանոթությունները, հեղինակավոր դիրքն ու նյութական հարստությունը նա ծառայեցրեց հայ դատին, որի լուծման համար աշխատեց օրնիբուն՝ չխնայելով ո՛չ ժամանակ և ո՛չ առողջություն: Հավատաց եվրոպական դիվանագիտության կեղծ խոստումներին, սակայն երբեք չխաբվեց նրա լաբիրինթոսում, տեսավ արևմտահայության գողգոթան, բայց միշտ եղավ սառնասիրտ ու տոկուն, ողջունեց Հայաստանի մի մասում անկախ պետականության հիմնումը և իր նպաստը բերեց նրա կայացմանը: Հայաստանի արևելյան հատվածում խորհրդային կարգերի հաստատումից հետո, չնայած բոլշևիկյան վարդապետության և վարչակարգի հանդեպ ունեցած ժխտական վերաբերմունքին, Պողոս Նուբարն իր կարևոր ավանդը ներդրեց աշխարհասփյուռ հայության հայրենադարձության և հայրենիքի վերաշինության գործերում:

Պողոս Նուբար փաշայի համար շրջադարձային եղավ 1912 թվականը, երբ նա դարձավ Հայ ազգային պատվիրակության նախագահ և հնարավորություն ստացավ զբաղվել ոչ միայն բարեգործությամբ, այլև մայր հայրենիքի ապագայի քաղաքական հարցերի լուծմամբ: Բանն այն է, որ 1908 թ. հեղաշրջմամբ Օսմանյան կայսրությունում իշխանության գլուխ եկած երիտթուրքերի հակահայ քաղաքականության հետևանքով արևմտահայության համար իր հայրենիքը վերածվել էր «տանջանքի ու ճնշման, վշտի ու աղքատության հովտի՝ թունավորված մահվան սպասումի ամենօրյա մղձավանջով»[1]:

Այլազգիներին ու այլադավաններին ճնշելու քաղաքականությունն իր հերթին հանգեցրեց արտաքին հիմնախնդիրների սրմանը: Կայսրությունում տեղի ունեցած իշխանափոխությունից առաջինն օգտվեց Ավստրո-Հունգարիան, որը բռնակցեց Բոսնիան ու Հերցոգովինան: 1911–12 թթ. իտալա-թուրքական պատերազմում կրած պարտության հետևանքով Օսմանյան կայսրությունը վերջ-

[1] "Русское слово", 20.XII.1913.

նականապես վտարվեց աֆրիկյան մայրցամաքից: 1912 թ. հոկտեմբերին սկսված բալկանյան առաջին պատերազմի ինչպես ընթացքը, այնպես էլ հետևանքները շշմեցուցիչ էին. Եվրոպայում Օսմանյան կայսրության կազմում մնացին Կ. Պոլիսը և Արևելյան Թրակիայի մի մասը: 1912 թ. նոյեմբերին Ալբանիան հռչակեց իր անկախությունը: Թուրքական պարտությունները հայ հասարակական-քաղաքական շրջաններին բերին այն համոզմանը, թե Օսմանյան կայսրության տրոհումն ու իբրև հիվանդ մարդու անդամահատումը գործնական կերպարանք է ստացել և ուր որ է տեղի կունենա: Իշխող էին դարձել Հայկական հարցի լուծման մոտալուտ լինելու տրամադրությունները: Ժամանակի հայ մամուլի էջերը լի էին Հայկական հարցի լուծման համար անհրաժեշտ նպաստավոր պայմանների ու հուսատու գրավականների առկայության մասին դատողություններով:

Այսպիսով, երիտթուրքերի քաղաքականության հետևանքով անլուր զրկանքների դատապարտված արևմտահայության կացությունը, ապա իտալա-թուրքական և Բալկանյան առաջին պատերազմներում Օսմանյան կայսրության պարտությունները պատճառներ դարձան Հայկական հարցի վերաբացման: Հայ հասարակական-քաղաքական շրջանները, չգտնելով փրկության այլ ելք, հարմար դատեցին Հայկական հարցը կրկին դնել միջազգային դիվանագիտության վիճաբեղանին: Հայ ժողովրդի ռուսական կողմնորոշումը և հայ-ռուսական հարաբերությունների դարավոր փորձը հայ հասարակական-քաղաքական շրջաններին վերստին հանգեցրին Ռուսաստանի օգնությամբ Հայկական հարցը լուծելու մտքին:

1912 թ. սեպտեմբերի 4-ին և 17-ին Կ. Պոլսի հայոց պատրիարք Հովհաննես Արշարունին ուղերձներով դիմեց Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ 5-րդ Սուրենյանցին: Դրանցից առաջինում պատրիարքը, մանրամասն նկարագրելով արևմտահայ ժողովրդի դժնդակ վիճակը, հայտնում էր, որ թուրքական սահմանադրության հաստատումից հետո հայ բնակչության տնտեսական կյանքում բարենպաստ փոփոխություններ տեղի չեն ունեցել, իսկ Բ. Դռանն արված բազմաթիվ գրավոր ու բանավոր բողոքները մնացել են իբրև ձայն բարբառո հանապատի: Պատրիարքը խնդրում էր նախանշել խելամիտ ու արդյունավետ ուղի, որին հետևելով կարելի էր խուսափել ստեղծված տագնապալի դրությունից[2]: Իր երկրորդ՝ սեպտեմբերի 17-ի ուղերձում, պատրիարքը խնդրում էր դիմել ռուսական կառավարությանը և նրանից օգնություն հայցել: Նա գրում էր. «Արդ, վեհափառ Տեր, ... Ձեր Ս. Օծության կողմանե կարելի է դիմումներ ընել ռուս կառավարության մոտ թրքահայ հոտիդ անհանդուրժելի տառապանաց վերջակետ մը դնելու համար՝ որուն ժամն հասած ըլլալ կկարծիմ»[3]:

Պատրիարքի երկու ուղերձներն ամենևին հանկարծակիի չբերեցին Էջմիածնի կաթողիկոսությանը, քանի որ մինչ այդ էլ այստեղ հասնում էին արևմտահայության ծանր կացությունն ահազանգող բազմաթիվ նամակներ:

---

[2] Архив внешней политики Российской империи (АВПРИ), ф. “Посольство в Константинополе”, оп. 517/12, д. 3727, л. 18-19.

[3] *Մ. Մաշտոցի անվան Մատենադարան, կաթ. դիվան, ց. 20, թղթ. 238, վավ. թիվ 110:*

Գևորգ 5-րդը նոր էր վերադարձել Պետերբուրգից, որտեղ, հավանաբար, արդեն ստացել էր Հայկական հարցի նկատմամբ ռուսական կառավարության վերադիրքավորման մասին հավաստիացումներ: Ուստի, առանց հապաղման, հոկտեմբերի 2-ին նա հատուկ աղերսագրով դիմեց Կովկասի փոխարքա Վորոնցով-Դաշկովին: Մանրամասն նկարագրելով արևմտահայության ծանր կացությունը և Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի համար ստեղծված անելանելի վիճակը, կաթողիկոսը փոխարքայի միջոցով դիմում էր ռուսաց ցարին՝ աղաչելով «առնել յուր հովանավորության տակ Տաճկաստանում ապրող բազմաչարչար հայ ազգը»[4]:

Միաժամանակ, Հայկական հարցի նկատմամբ ռուսական կառավարող շրջանների տրամադրությունները շոշափելու համար Պետերբուրգ էր գործուղվել Էջմիածնի հայ լուսավորչական սինոդի անդամ Մեսրոպ եպիսկոպոս Տեր-Մովսեսյանը, որն այնտեղ ջերմ ընդունելություն էր գտել: Պետերբուրգում Մեսրոպ եպիսկոպոսը հավաստիացնում էր, որ հայկական շրջանները «իրենց հույսը դրել են ռուսների վրա և սպասում են, որ ռուսները այս անգամ հայերի բարօրության խնդիրը Տաճկաստանում ամբողջովին իրենց ձեռքը կառնեն»[5]:

Տպավորություններն առավել քան հուսադրող էին: Փոխարքա Վորոնցով-Դաշկովի, արտաքին գործերի նախարար Ս. Դ. Սազոնովի և նախարարների խորհրդի նախագահ Վ. Ն. Կոկովցովի հետ հանդիպումները ցույց տվեցին, որ թեև Ռուսաստանը մտադիր չէր պատերազմել Օսմանյան կայսրության հետ, սակայն պատրաստ էր Բալկանյան կնճիռը հարթելու նպատակով Լոնդոնում հրավիրվող տերությունների համաժողովում պաշտպանել Հայկական հարցը[6]:

Հոկտեմբերի 17-ին Մեսրոպ եպիսկոպոսի հետ հանդիպման ժամանակ Ս. Դ. Սազոնովը խորհուրդ տվեց՝ նախ, Լոնդոնի համաժողովի նախօրեին պաշտոնական խնդրանքով դիմել ռուսաց կայսրին և երկրորդ՝ Եվրոպայում ունենալ հատուկ պատվիրակություն[7]: Իսկ Վ. Ն. Կոկովցովը նույնիսկ հավաստիացնում էր, որ անհրաժեշտ է դիմել նաև Անգլիային ու Գերմանիային որպես Հայկական հարցում շահագրգիռ տերությունների[8]:

Ցարին ուղղված պաշտոնական խնդրագիրը հնարավորություն կտար խուսափելու Հայկական հարցը ռուսական դիվանագիտության խարդավանքների արդյունք ներկայացնելու թուրքական սովորությունից: Խնդրագիրը հայ ժողովրդի հավաքական կամքի արտահայտությունն էր լինելու, քանզի դիմողը Ամենայն հայոց կաթողիկոսն էր:

Ինչպես հայ ժողովրդի, այնպես էլ ռուսական կառավարության համար շատ ավելի ձեռնտու էր, եթե Հայկական հարցի պաշտպանությունը և բարենորոգումների գործադրումը ստանձներ միայն Ռուսաստանը: Սակայն ակնհայտ էր, որ առանց եվրոպական երկրների մասնակցության, անհնար կլիներ միայն

---

[4] *Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 57, ց. 5, գ. 26, թ. 6:*
[5] *Մաշտոցի անվան Մատենադարան, կաթ. դիվան, ց. 20, թղթ. 238, վավ. թիվ 164ք:*
[6] *Տե՛ս ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 28, թ. 6:*
[7] *Տե՛ս Մատենադարան, կաթ. դիվան, ց. 20, թղթ. 238, վավ. 164:*
[8] *Տե՛ս ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 28, թ. 6:*

դիվանագիտական միջոցներով Օսմանյան կայսրությանը պարտադրել հայկական բարենորոգումները: Անհրաժեշտ էր նախապատրաստել նաև եվրոպական հասարակական կարծիքը: Ահա այս հարցերում անգնահատելի ծառայություն կարող էր մատուցել կազմվելիք հայկական պատվիրակությունը:

Տեղեկանալով Սազոնովի խորհուրդներին և համոզված, որ վերջիններս լիովին համապատասխանում են կաթողիկոսական ու պատրիարքական դիվանագիտության նախանշած ուղուն, Գևորգ 5-րդ Սուրենյանցը ձեռնամուխ եղավ դրանց իրագործմանը: 1912 թ. դեկտեմբերի 24-ին նա հատուկ խնդրագրով դիմեց ռուսաց ցարին՝ Նիկոլայ Երկրորդին: Նրանում կաթողիկոսը մատնանշում էր, որ Հայկական հարցը եվրոպական դիվանագիտական աշխարհ մուտք գործելուց հետո անցել էր երեսունչորս տարի, և այդ ընթացքում ոչինչ չէր արվել արևմտահայ ժողովրդի դժնդակ գոյավիճակը բարելավելու համար: Ե՛վ սուլթանական, և՛ սահմանադրական կառավարությունների օրոք զանազան հակամարդկային ու անթույլատրելի միջոցներ գործի դրվեցին հայերի կյանքը անտանելի դարձնելու համար: Ուստի, եզրակացնում էր կաթողիկոսը, թուրքական ցանկացած վարչակարգի օրոք էլ հայերը, առանց քրիստոնյա հզոր պետության ամուր հովանու, կմնան օրենքի պաշտպանությունից զուրկ: Իսկ այդպիսի տերություն միայն Ռուսաստանն էր՝ «արևելքի քրիստոնյաների վաղեմի պաշտպանը»: Վերջում կաթողիկոսը կործանման դատապարտված արևմտահայության անունից խնդրում էր գործուն միջոցներ ձեռնարկել Օսմանյան կայսրության բազմաչարչար հայ բնակչության դրությունը բարելավելու համար, հակառակ դեպքում՝ հրաժարումը հավասարազոր էր մի ամբողջ ժողովրդի վերջնական բնաջնջումի դատապարտելուն[9]:

Բացի դիմումից, Գևորգ 5-րդը Վորոնցով-Դաշկովի միջոցով խնդրում էր իրեն հնարավորություն տալ ներկայանալ ցարին և անձամբ զեկուցել Հայկական հարցի մասին[10]:

Կաթողիկոսի խնդրագիրը Նիկոլայ Երկրորդին հանձնվեց 1913 թ. հունվարի 18-ին, Ցարսկոյե Սելոյում: Դիմումի ընթերցումից ու Հայկական հարցի մասին Ն. Վ. Կոկովցովի զեկուցումը լսելուց հետո կայսրը կաթողիկոսի խնդրագրի վրա մակագրեց. «Բալկանյան թերակղզում պատերազմի ավարտից հետո», իսկ այնուհետև իր ձեռքով ընդգծեց «Թուրքիայի հայերի դրությունը բարելավելու համար միջոցներ ձեռնարկելու մասին» բառերը[11]: Մինչև Բալկանյան պատերազմի ավարտը Հայկական հարցի արծարծման հետաձգումը արդեն անժամանակ էր դարձնում ցարին ներկայանալու Գևորգ 5-րդի խնդրանքը:

Էջմիածնի կաթողիկոսությունը խնամքով ձեռնարկեց ազգային պատվիրակություն կազմելու ռուսական կառավարության երկրորդ խորհրդի իրագործումը ևս: Սակայն առաջացան որոշ դժվարություններ: Անհրաժեշտ էր գտնել այնպիսի թեկնածու, որը կապեր ունենար եվրոպական պետական, դիվանագիտական ու քաղաքական շրջանների հետ, նյութապես ապահովված և ան-

---

[9] *Տե՛ս ՀԱԱ, գ. 26, թ. 17-20:*

[10] АВПРИ, ф. “Политархив 1913 г.”, оп. 482, д. 3460, л. 29.

[11] *Տե՛ս նույն տեղում, թ. 29-31:*

կուսակցական լինելով հանդերձ անվիճելի հեղինակություն վայելեր: Սկզբում նախապատվությունը տրվեց Գերմանիայում Իրանի դեսպան Հովհաննես խան Մասեհյանին, որը, սակայն, դիվանագիտական աշխատանքի ծանրաբեռնվածության պատճառով հրաժարվեց[12]: Այնուհետև, մի շարք այլ թեկնածություններ քննարկելուց հետո, 1912 թ. նոյեմբերի 10-ին Գևորգ 5-րդ Սուրենյանցը 1482 թվակիր կոնդակով դիմեց այդ ժամանակ Փարիզում գտնվող Պողոս Նուբար փաշային՝ խնդրելով նրան ստանձնել հայոց ներկայացուցչի պաշտոնը և «յանձն առնուլ երթալ ի վեհաժողով (կոնֆերանս) և առաջի առնել պատգամավորաց եվրոպական պետությանց զինդիր հայոց և զտեղեկագիր մեր, հայցելով զմիջնորդություն նոցա առ ողբալի կացություն հայ ժողովրդեան Տաճկաստանի»[13]:

Պողոս Նուբար փաշան կաթողիկոսական կոնդակն ստացավ դեկտեմբերի 2-ին Փարիզում, երբ արդեն պատրաստվում էր վերադառնալ Եգիպտոս: Նա, որ մինչ այդ Եգիպտոսի ազգային իշխանությունների դիմումների հիման վրա արդեն տեսակցել էր Ֆրանսիայի վարչապետ Պուանկարեին և խնդրել Բալկանյան հիմնահարցը լուծելու ժամանակ քննարկել նաև արևմտահայության համար բարենորոգումներ իրագործելու հարցը և ստացել հուսադրող խոստումներ[14], առանց երկմտելու ընդունեց Ամենայն հայոց հայրապետի խնդրանքը: Պողոս Նուբարը հետաձգեց Եգիպտոս վերադառնալու ծրագրերը և հաստատապես կարելի է պնդել, որ այս պահից էլ նրա անձնական կյանքն ու գործերը մղվեցին երկրորդական պլան:

Դեռ երիտասարդ տարիքից Պողոս Նուբարը կարևոր դեր է խաղացել Եգիպտոսի հայ համայնքի ազգային կյանքում: Լինելով Ալեքսանդրիայի հայոց առաջնորդարանի խնամակալության հանձնաժողովի նախագահ՝ նա շոշափելի օգնություն կազմակերպեց համիդյան ջարդերից մազապուրծ Եգիպտոս ժամանող արևմտահայ գաղթականներին: Առհասարակ, Ալեքսանդրիայի (1888–1904 թթ.) և Կահիրեի (1905–1914 թթ.) հայ համայնքի ներքին կյանքը ղեկավարելու տարիներին Պողոս Նուբար փաշան ծանրակշիռ ներդրում ունեցավ ազգային հիմնարկությունների շահույթների ավելացման, հայ բնակչությանն աշխատատեղերով ապահովելու, հայկական որբանոցների, դպրոցների և մշակույթի օջախների համար եկամուտների կայուն աղբյուրներ ստեղծելու ուղղությամբ:

Ամենակարևոր դերը, որ Պողոս Նուբարը խաղացել էր արտերկրի հայոց ազգային կյանքում մինչ պատվիրակության նախագահ դառնալը, 1906 թվականին, «Հայ բարեգործական ընդհանուր միության» հիմնումն էր: Միության ֆինանսական միջոցները գոյանում էին անդամավճարներից, անձնական նվիրատվություններից ու հանգանակություններից: Միությունը ղեկավարում էր սկզբում Կահիրեում, իսկ 1922 թ. Փարիզում գտնվող կենտրոնական վարչությունը: Վարչության առաջին նախագահը Պողոս Նուբար փաշան էր: Միությունն իր առջև նպատակ էր դրել նյութապես օգնել աշխարհասփյուռ կարիքա-

---

[12] *Տե՛ս ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 29, թ. 10:*

[13] *ՀԱԱ, գ. 27, թ. 1-2:*

[14] *Տե՛ս Մ. Ա ր զ ո ւ մ ա ն յ ա ն. Հայաստան 1914-1917, Երևան 1969, էջ 76:*

վոր բոլոր հայերին, նպաստել հայ երիտասարդության կրթադաստիարակչական համակարգի զարգացմանը, աջակցել արտերկրում հայապահպանության նպատակով իրագործվող բոլոր ձեռնարկներին, զորավիգ լինել հայրենիքի տնտեսական բարգավաճմանը և այլն: Մինչ Առաջին աշխարհամարտը բարեգործականը Պողոս Նուբարի եռանդուն ջանքերի շնորհիվ հաջողությամբ իրագործում էր իր առջև դրած խնդիրները: Միությունն ուներ 150 մասնաճյուղ, որից միայն 70-ը՝ Օսմանյան կայսրությունում[15]:

Ազգային պատվիրակության նախագահ դառնալը միանգամից հռչակավոր դարձրեց Պողոս Նուբարին: Բոլորի հայացքն ուղղվեց դեպի Պողոս Նուբարը, որի երակներում, շատերի կարծիքով, Արցախի անկախ մելիքների ազատատենչ արյունն էր հոսում: Ամենուր խոսվում ու գրվում էր, թե Պողոս Նուբարն ամենահարմար թեկնածուն է, քանզի նրա անձնական ունակություններն ու հնարավորությունները լիուլի բավարարում են նման բարձր պաշտոնի պահանջներին: Ահավասիկ «Մշակ» թերթի կարծիքը. «Կաթողիկոսը՝ խիստ նպատակահարմար ընտրություն մը ըրած էր Պողոս Նուբարի հանձնելով եվրոպական պետությանց մոտ դիմում կատարելու պաշտոնը: Պողոս փաշան ունի ընդարձակ հարաբերություններ և ծանոթություններ դիվանագիտական աշխարհին մեջ, ունի անսահման ծախսելու դյուրություն – ինչ որ մեծ ջիղ մըն է այս տեսակ գործերու մեջ և հմտություն դիվանագիտական ասպարեզին մեջ»[16]: «Տարազ» հանդեսի վկայությամբ՝ Նուբար փաշայի պապերը եղել էին Դավիթ Բեկի զինակիցներից և քաջությամբ աչքի ընկել Տաթևի պաշտպանության ժամանակ[17]: Ապստամբության պարտությունից հետո Նուբարյանները հաստատվել էին Զմյուռնիայում (Իզմիր) և զբաղվել վաճառականությամբ: Երվանդ Օտյանը հավաստիացնում էր, որ XIX դարի սկզբին Նուբարյաններն Իզմիրում արդեն հայտնի գերդաստան էին: «Պողոս փաշայի հայրը՝ մեծն Նուպար,– գրում է նա,– ծնած է Իզմիր, իր հայրն էր Մկրտիչ Նուպարյան, որ անցյալ դարու սկիզբները կապրեր և որ իր ժամանակին ազատական և առաջադիմասեր անձնավորություն մը եղած է եվրոպական կրթություն մը առած ըլլալով»[18]: Նուբար փաշան, Եգիպտոսի պետական ու քաղաքական նշանավոր գործիչներից էր եղել և վաստակել էր համաեվրոպական բարձր հեղինակություն: Նա 1875–76 թթ. եղել էր Եգիպտոսի արտաքին գործերի և առևտրի, իսկ հետո՝ 1878–79 թթ., 1884–88 թթ. և 1894–95 թթ. առաջին նախարար: Սակայն Պողոս Նուբար փաշան չէր հետևել հորը և չէր զբաղվել քաղաքական գործունեությամբ: Նա տնտեսական բազմաբնույթ գործունեություն էր ծավալել և կարճ ժամանակի ընթացքում դարձել էր մեծ հարստության տեր, հասել էր երևելի դիրքի ու փառքի: Պողոս Նուբար փաշան մտերմական հարաբերություններ էր հաստատել Եվրոպայի դիվանագիտական ու քաղաքական շրջանակների հետ:

---

[15] *Տե՛ս Լ. Զ ո ր ս մ ի ր ս յ ա ն. Համապատկեր արևմտահայոց մեկ դարու պատմության, Գ հատոր, Բեյրութ 1975, էջ 117:*

[16] *«Մշակ», 4.I.1913:*

[17] *Տե՛ս «Տարազ», 1913, թիվ 1, հունվար, էջ 5:*

[18] *Ե. Օ տ յ ա ն. Պողոս փաշա Նուպար (կենսագրական նոթեր), Կ.Պոլիս 1913, էջ 4:*

Պաշտոնական կամ անպաշտոն այցով Եգիպտոս ժամանող պետական գրեթե բոլոր այրերը, քաղաքական գործիչներն ու մտավորականները լինում էին Պողոս Նուբարի տանը, հյուրասիրվում ու նրա միջոցով ծանոթանում հայ ժողովրդի պատմությանը, մշակույթին և կացությանը:

Ահա այս բոլոր հանգամանքներն ու իրողությունները հաշվի առնելով էր, որ կաթողիկոսի ընտրությունը կանգ էր առել համբավավոր եգիպտահայի թեկնածության վրա: Իսկ թե ինչպես ինքը՝ Պողոս Նուբարը, ընդունեց իր ընտրությունը, նկարագրում է Արշակ Չոպանյանը, որ այդ պահին պատահաբար ներկա է եղել կաթողիկոսական կոնդակի հանձնմանը. «Կորովի, ձեռներեց և գործունյա մարդ, արդար ու գեղեցիկ փառասիրություն ուներ ան իր մեծանուն հոր, որուն համար պաշտամունք մը կը տածեր՝ արժանավոր զավակ մ'ըլլալու, իր իսկ գործերով պատմության մեջ արձանագրվող անուն մը ձգելու, և ահա պատեհությունն իրեն կը տրվեր իր ցեղին դատին համար իսկ աշխատելով՝ ծառայելու, օգտակար հանդիսանալու, հանրօգուտ դեր կատարելու իր ներքին բուռն ու տիրական ըղձանքին գոհացում տալու և նույն ատեն իր ազգին պատմական անձնավորությանց շարքին մեջ իր անձնավորության ու ճիգերուն շնորհիվ իր իրավունքն եղող տեղը գրավելու»[19]:

Դառնալով ազգային պատվիրակության նախագահ, Պողոս Նուբար փաշան անհապաղ ձեռնամուխ եղավ նրա անդամների ընտրությանը: Նրա կարծիքով պատվիրակությունը պետք է կազմվեր միայն արևմտահայ գործիչներից, որպեսզի ինչպես թուրքական, այնպես էլ եվրոպական կառավարող շրջանները նրանց չվերաբերվեն որպես Ռուսաստանի կամ այլ երկրի դրածոների: Բացի այդ, ապրելով Եգիպտոսում, նա կտրվել էր թուրքական իրականությունից, իսկ այդ բացը կարող էին լրացնել միայն արևմտահայ գործիչները: Այդ նպատակով էլ նա Եվրոպա հրավիրեց նախկին պատրիարք Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյանին, որը Հայկական հարցի գերազանց իմացությամբ, փորձառությամբ պատվիրակության անդամի ամենից հարմար թեկնածուն էր, սակայն Ազգային ժողովի ամբաստանության տակ գտնվելու պատճառով Մ. Օրմանյանը մերժեց Պողոս Նուբարի հրավերը[20]: Պողոս Նուբարը չցանկացավ պատվիրակության կազմում ունենալ կուսակցական հայտնի գործիչների, հատկապես ՀՀ դաշնակցության, որպեսզի չհարուցի տերություններից ոչ մեկի, մանավանդ, Ռուսաստանի դժգոհությունը:

Պողոս Նուբար փաշայի ցանկությամբ պատվիրակության կազմում ընդգրկվեցին՝ Եվրոպայի հայոց հոգևոր թեմի առաջնորդ Գևորգ եպիսկոպոս Ութուճյանը, «Հայ բարեգործական ընդհանուր միության» փոխնախագահ, հայտնի արևելագետ Յաղուբ Արթին փաշան, Կ. Պոլսի Կեդրոնական վարժարանի նախկին տեսուչ, իրավաբան Հարություն Մոստիչյանը և նշանավոր մանկավարժ ու բանաստեղծ Մինաս Չերազը[21]:

---

[19] *«Անահիտ», 1930, թիվ 2, մայիս-հունիս, էջ 120:*

[20] *Տե՛ս ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 55, թ. 12:*

[21] *Վաթսունամյա Մինաս Չերազը, որը դեռևս 1878 թ. Բեռլինի վեհաժողովին մասնակցելու համար Մկրտիչ Խրիմյանի գլխավորած պատվիրակության անդամ էր եղել, հինգամյա*

Ազգային պատվիրակության անդամների ընտրության հետ միաժամանակ Պողոս Նուբար փաշան հիմնեց նաև կենտրոնական դիվան, որի կազմում ընտրվեցին Վահան Մալեզյանը, Արշակ Չոպանյանը, Համբարձում Առաքելյանը և Փարիզի հայ գաղութի մի քանի ներկայացուցիչներ:

Նոյեմբերի 10-ի կոնդակով բավականաչափ լայն իրավասություններ էին տրվել ազգային պատվիրակությանը, որոնք, սակայն, շուտով կրճատվեցին ու սահմանափակվեցին: Արդեն 1913 թ. հունվարի 5-ին Պողոս Նուբար փաշային գրած նամակում կաթողիկոսն ուղղակի պահանջում էր. նախ՝ բացարձակապես ոչ մի հավատ չընծայել թուրքական կառավարությանը, որը «տասնյակ տարիների բազմաթիվ փորձերով ապացուցեց, որ միանգամայն անընդունակ ու անկարող է որևէ, մինչև իսկ չնչին բարեկարգություն մտցնելու առանց եվրոպական պետությանց ճնշման»: Երկրորդ՝ ամենուր ռուսական դեսպանների հետ պահպանել մշտական կապեր, որպեսզի նրանք համոզվեն, որ հայերը «երբեք ռուսական շահերին հակառակ չեն, այլ ընդհակառակը, աշխատանք է լինում դիվանագիտական շրջաններում ... հօգուտ ռուսական կոնտրոլի...»[22]: Ռուսական դեսպանների հետ համագործակցելու պահանջը դնում էր նաև պատրիարք Հովհաննես Արշարունին, որը 1913 թ. մարտի 30-ին Պողոս Նուբար փաշային ուղղված նամակում գրում էր, որ «հայկական դատին իսկական պաշտպան ու նախաձեռնողը լինելով ռուսական կառավարությունը, իբրև դրացի անմիջական պետություն, առանց անոր չենք կրնար ապահովել մեր դատին նպաստավոր հաջողությունը, և միշտ խորհրդակցաբար հարկ է գործել ռուս կառավարության ներկայացուցիչներուն հետ»[23]:

Հունվարի 5-ի նամակով Գևորգ 5-րդը միաժամանակ խորհուրդ էր տալիս կենտրոնացնել Եվրոպայի հայազգի բարձրաստիճան բոլոր պաշտոնյաների, գիտության ու մշակույթի գործիչների ջանքերը, օգտագործել նրանց ծանոթություններն ու կապերը ազգային պատվիրակության աշխատանքներին օժանդակելու համար: Կաթողիկոսը գրում էր. «Գործի հաջողության համար անհրաժեշտ է ունենալ եվրոպական պետությանց մայրաքաղաքներում հեռատեսությամբ ու որոշ ծրագրով լուրջ աշխատողներ: Վիեննայի Մխիթարյան միաբանության գերապատիվ սրբահայրը, ինչպես արդեն մի անգամ դիմել էր ավստրիական կառավարության, հավանական է այժմ ևս շարունակի նույն աշխատանքը ձեր ցուցումներով, նույնպես և Հունգարիայի նախարարապետ ականավոր հայազգի Լուկաչը, Բեռլինում վսեմ. Հովհաննես խան Մասեհյանը, Իտալիայում Վենետիկի Մխիթարյան Սրբահայրը, իշխան դ'Ապրո և այլք, Լոնդոնում պրոֆ. Թումանյան, դոքթ. Մ. Գաբրիելյանը և այլք»[24]:

աշխատանքից հետո 1913 թ. մայիսի 6-ին, վկայակոչելով վատառողջությունը, հրաժարական տվեց: Հրաժարականի իրական պատճառը, Վահան Փափազյանի վկայությամբ, Պողոս Նուբարի աշխատառճն էր, որը պատվիրակության աշխատանքների ամբողջ ծանրությունը վերցրել էր իր վրա և միանձնյա էր ղեկավարում մեծածավալ գործը (տե՛ս Ա. Ա լ պ ո յ ա ճ յ ա ն. Մինաս Չերազ, իր կյանքը և գործը, Գահիրե, 1927, էջ 346):

[22] *ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 19, թ. 9:*

[23] *ՀԱԱ, ֆ. 57, գ. 26, թ. 8-9:*

[24] *ՀԱԱ, ֆ. 57, գ. 19, թ. 9:*

1912 թ. դեկտեմբերի վերջերին Գևորգ 5-րդը ստացավ Վորոնցով-Դաշկովին ուղղված հոկտեմբերի 2-ի իր նամակի պատասխանը: Նրանում փոխարքան մատնանշում էր, որ թեև ռուսական կառավարությունը լիակատար բարյացակամությամբ է վերաբերվում արևմտահայ ժողովրդի կարիքներին, սակայն հենց հայերի շահերից ելնելով, մտադիր չէ Հայկական հարցն արծարծել Բալկանյան թնջուկին նվիրված Լոնդոնի հաշտության բանակցություններում: Ռուսական կառավարությունն իր հրաժարումը հիմնավորում էր Հայկական հարցում եվրոպական երկրների միջև գոյություն ունեցող անհամաձայնության ու միակամության բացակայությամբ: Վերջում Վորոնցով-Դաշկովը խնդրում էր տերություններին ուղղված հայկական անժամանակ դիմումներով չխանգարել արևմտահայերի գոյավիճակը բարելավելու նպատակով ռուսական մտադրությունների իրագործմանը[25]:

Էջմիածնի կաթողիկոսությունը համակերպվեց ռուսական դիվանագիտության այս որոշման հետ: Արդեն հունվարի 4-ին Գևորգ 5-րդը Պողոս Նուբարին հրահանգեց՝ «չդիմել Լոնդոնի դեսպանախորհրդին և առ այժմ գործունեությունը սահմանափակել եվրոպական պետությանց կառավարող և ազդեցիկ շրջանների կարծիքները և տրամադրությունները նախապատրաստելով...»[26]: Պողոս Նուբարը, համոզված, որ Հայկական հարցի լուծումը հնարավոր է միայն Ռուսաստանի օգնությամբ, ստիպված էր տեղի տալ: Փարիզում ռուսական դեսպան Ա. Պ. Իզվոլսկու հետ հանդիպման ժամանակ նա հայտարարեց, որ ազգային պատվիրակությունը, չցանկանալով ձեռնարկել ռուսական կառավարության հետ չհամաձայնեցված քայլ, ստիպված է հրաժարվել Լոնդոն գնալու մտադրությունից[27]:

Լոնդոնի վեհաժողովում Հայկական հարցի քննարկմանը դեմ էին նաև Ռուսաստանի դաշնակիցներ Մեծ Բրիտանիան և Ֆրանսիան: Անգլիայի արտաքին գործերի նախարար Էդուարդ Գրեյը Փարիզում իր դեսպանի միջոցով Պողոս Նուբարին տեղեկացնում էր, թե «դիվանագիտական սեղանը այնքան ծանրաբեռնված է, որ եթե հայկական հարցն ալ ավելացվի՝ կ'կքի: Անմիջապես որ անոր վրայեն պակսին մեկ քանի հոգսեր՝ հայկական հարցը պիտի դրվի մեջտեղ»[28]:

Պողոս Նուբարը հարկադրված էր առայժմ բավարարվել միայն Եվրոպայի հայկական կոմիտեների ու մամուլի միջոցով հայասիրական տրամադրությունների քարոզչությամբ: Ռուսական դիվանագիտությունը գտնում էր, որ Պողոս Նուբարն անգնահատելի ծառայություն կմատուցի Հայկական հարցի լուծման ուղղությամբ ռուսաց ձգտումներին, եթե կարողանա Եվրոպայի հասարակական կարծիքը տրամադրել հօգուտ հայ դատի: Կ. Պոլսի ռուսական դեսպան Մ. Ն. Գիրսը Գրիգոր Զոհրապին հավաստիացնում էր, որ ազգային պատվիրակության գործունեությունը շատ օգտակար կարող է լինել դիվանագիտական

---

[25] *Տե՛ս ՀԱԱ, ֆ. 57, գ. 26, թ. 8-9:*

[26] *ՀԱԱ, ֆ. 57, գ. 26, թ. 25:*

[27] АВПРИ, ф. “Посольство в Константинополе”, оп. 517/12, д. 3727, л. 22.

[28] *«Բյուզանդիոն», 16.I.1913:*

աշխարհի հետ «կապ պահելով, պրոպագանդա ընելով, հարաբերություններ մշակելով և համակրանք ստեղծելով հայոց դատին համար: «Պիտի գիտնաք,– - հավաստիացնում էր դեսպանը,– որ այսպիսի պարագաներու մէջ ժողովրդի համակրանքը և հանրային կարծիքը մեծ դեր կխաղան»[29]*:*

Այսպիսով, հայ հասարակական-քաղաքական շրջանները Հայկական հարցի արծարծման առանձնաշնորհը վերապահեցին ռուսական դիվանագիտությանը և, փաստորեն, իրենց զրկեցին գործուն միջամտություն ունենալու հնարավորությունից, թեպետ քննարկվող հարցը իրենց ժողովրդի կյանքի, պատվի ու գույքի ապահովության խնդիրն էր: Ե՛վ Էջմիածնի կաթողիկոսությունը, և՛ Կ. Պոլսի պատրիարքարանը լոկ աղերսագրեր ներկայացնողներ էին, իսկ հույսը՝ Ռուսաստանի ձգտումներն ու վճռականությունն էր: Ազգային պատվիրակության համար ևս Ռուսաստանի նախանշած ուղին դարձավ կաղապար: Փաստորեն, ազգային պատվիրակությունը պետք է բավարարվեր եվրոպա կան երկրներում Հայկական հարցի նկատմամբ պետական ու հասարակական-քաղաքական շրջանակներում համակրանքի մթնոլորտ ձևավորելու աշխատանքներով: Ի պատիվ Պողոս Նուբար փաշայի՝ անհրաժեշտ է նշել, որ նա 1913 թ. ընթացքում փայլուն կերպով կատարեց պատվիրակության առջև դրված առաջադրանքները և մեծապես նպաստեց հայկական բարենորոգումների շուրջ 1914 թ. հունվարի 26-ի ռուս-թուրքական համաձայնագրի կայացմանը:

ПОГОС НУБАР ПАША – ГЛАВА АРМЯНСКОЙ НАЦИОНАЛЬНОЙ ДЕЛЕГАЦИИ

МИКАЕЛ МАРТИРОСЯН

Р е з ю м е

Трудное положение, в котором оказались западные армяне в результате политики младотурок, а также военные поражения Османской империи во время итало-турецкой и первой Балканской войн стали причиной возобновления Армянского вопроса осенью 1912 г. Чтобы решить балканскую проблему, державы созвали конгресс в Лондоне. С целью представления Армянского вопроса на этом конгрессе Католикос всех армян Геворг V создал национальную делегацию, главой которой назначил известного армянского национального, общественного деятеля и благотворителя из Египта Погос Нубар пашу. Католикос сделал целесообразный выбор, так как Погос Нубар паша своими способностями, возможностями и связями целиком соответствовал требованиям такой высокой и ответственной должности. Перед делегацией была поставлена задача создать благожелательную атмосферу в пользу Армянского вопроса в европейских общественно-политических кругах, чем и занялся Погос Нубар паша.

[29] *Էջմիածնի Մայր տաճարի դիվան, վավ. 288, էջ 38:*

POGHOS NOUBAR PASHA – HEAD OF THE ARMENIAN NATIONAL DELEGATION

MIKAEL MARTIROSYAN

S u m m a r y

The difficult situation in which western Armenians found themselves because of the Young Turks' policy, and also the military defeats of the Ottoman Empire during Italian-Turkish and the first Balkan wars were the reasons for the reopening of the Armenian Question in the autumn of 1912. A summit of the Great Powers on the Balkan issue was to be organized in London. The Catholicos of all Armenians Gevorg V created a national delegation, which had the vocation to present the Armenian Question in London and appointed Poghos Noubar Pasha, the famous Armenian national and political figure and *benefactor* from Egypt, as the head of delegation. The choice of the Catholicos was quite judicious, as Poghos Noubar Pasha, with his possibilities, skills and relationships was the right person for such an important and responsible mission. The task of the delegation was to create a favorable atmosphere among the European countries' political mediums towards the Armenian Question, a task which was fully accomplished by Poghos Noubar Pasha.